Կարծում ենք, որ բոլոր վերլուծած նիւթերը, որոնք գրուած էին ներկայ յօդուածով ընթերցողների առաջ, միանգամայն բաւական են հաստատելու այն փաստը, որ հարսի առևանգումն և գնումն հայ սովորութական իրաւունքի մէջ մի ժամանակ գերակշռող տեղ էր բռնում ամուսնական հարցում։ Այժմս, ինչպէս տեսնում ենք, առևանգումը խսպառ վերացել և կորցրել է իւր նշանակութիւնն իբրև դրական սովորոյթ, բայց հարսի գնումը տակաւին պահպանում է իւր գոյութիւնը տեղ տեղ կամ ամբողջովին կամ վերափոխուած ձևերով։ Յամենայն դէպս այսօր չքանալու վրայ է ամուսնութեան միջոցի և այդ վերջին ճնացորդը։ Այլապէս չի էլ կարող լինել։ Առևանգումն և ապա գնումը կարող են պահպանուել ու ծաղկել իրենց բնաւորութեան համաձայն պայմաններում։ Այնտեղ, ուր սոցիալ-կուլտուրական զարգացումը կանգնած է ստոր աստիճանի վրայ, ուր իրաւաբանական յարաբերութիւնները հիմնուած են միանգամայն ուրիշ սկզբունքների վրայ, քան թէ մեր ժամանակներում, այնտեղ խօսք չի կարող լինել ամուսնութեան այն եղանակների մասին, որոնք արդի քաղաքակրթուած հասարակութիւնների բաժինն են կազմում։ Ընթերցողն անշուշտ նկատած կլինի բոլոր վեր յիշած օրինակներից, թէ ժողովուրդն ինչ հայեացք ունի կնոջ նշանակութեան ու նրա իրաւաբանական դրութեան վրայ։ Կինը զուրկ է ակտիւ իրաւունքներից, նրա գոյութիւնն, իբրև *իրաւանց անձնատրութեան*, հայ սովորութական իրաւունքը բնաւ չի ընդունում. հայ կինը կարծես *իրաւանց առարկայի* շարքն է դասուած։ Ուստի պարզ է, որ այդպիսի հայեացքների համեմատ էին վարուելու իգական սեռի հետ։ Վերցնենք օրինակի համար հարսի գնումը, որ ինչպէս ասել ենք, տեղ-տեղ տակաւին անարատ պահպանուել է։ Գնումը, իրաւաբանական տեսակէտից նայած, այստեղ հանդէս է գալիս իբրև ընչական յարաբերութիւններից բըղխած մի դաշինք, որտեղ մի կողմը՝ աղջկայ ընտանիքը շահագրգռուած է նրանով, որ զիջանում է միւս կողմին՝

Հայ մատենագրության թուանշային գրադարան